# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 16.12.2015թ-ի N 153-Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 25.12.2015թ. ժամը $12^{00}$

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 16.12.2015թ-ի N 153-Լ հրամանի հիման վրա վառելիքի ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ, ծածկագիր՝ «ԲԷՑ–ՇՀԱՊՁԲ-16/01»

*Մասնակցում էին՝*

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | Դ.Գևորգյան | - գլխավոր տնօրենի տեղակալ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ս.Իգիտբաշյան | - գլխավոր ճարտարագետ |
| | Լ.Զավադյան | - գլխավոր տնօրենի խորհրդական |
| | Հ. Օհանյան | - մատակարարման բաժնի մասնագետ |
| | Մ.Բաղրամյան | - իրավապայման. բաժնի պետ |
| Քարտուղար՝ | Ռ.Ալբերտյան | - գնումների համակարգող |

## I. Հայտերի բացման մասին

---------------------------------------------------------------------

(Դ.Գևորգյան)

1. Հանձնաժողովը արձանագրեց.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

- «Ֆլեշ» ՍՊԸ-ն՝ 25.12.2015թ, ժամը 11:00-ին, իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Ե. Կողբացու 30, հեռ. 010 53 42 33

2.1 Մասնակցի ծրարում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

2.2 Մասնակցի գնային առաջարկն է.

| Հ/Բ | Գնման առարկայի անվանումը | Քանակ | Գնային առաջարկ |
|---|---|---|---|
| 1 | Բենզին /Ռեգուլյար/ | 180000 լիտր | 61 500 000 |
| 2 | Բենզին /Պրեմիում/ | 86000 լիտր | 30 816 666,67 |
| 3 | Ավտոմոբիլային դիզելային վառելիք | 30000 լիտր | 12 000 000 |

Ելնելով հայտերի բացման արդյունքներից՝ հանձնաժողովը որոշեց.

1. Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:
2. Մասնակցի գնային առաջարկի հաշվարկները ճիշտ են:
3. Գնման ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Ֆլեշ» ՍՊԸ-ին բոլոր երեք չափաբաժինների համար:
4. Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն գնային առաջարկ ներկայացրած «Ֆլեշ» ՍՊԸ-ի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշներին վերաբերող

պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

5. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստ գումարել ՀՀ ֆինանսների նախարարությունից եզրակացություն ստանալու օրվա հաջորդ աշխատանքային օրը ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

նախագահ՝ Դ.Գևորգյան

անդամներ՝ Ս.Իգիտբաշյան

Լ.Ջավադյան

Հ. Օհանյան

Մ.Բաղրամյան

քարտուղար՝ Ռ.Ալբերտյան